21.02.2024թ.

Պատվիրատու՝ «ԶԻՆԱՊԱՀ Զինծառայողների ապահովագրության ազգային հիմնադրամ»

Հաստատված է ԶԻՆԱՊԱՀԻ Մրցութային հանձնաժողովի 21.02.2024թ. N 20240221 **արձանագրությամբ**

Հ Ր Ա Վ Ե Ր

ԶԻՆԱՊԱՀԻ «Զոհված զինծառայողների ճանաչման և հարգանքի տուրքի մատուցման» նախագծի շրջանակում **ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու նպատակով հայտարարված բաց մրցույթ»**

Հարգելի՛ մասնակից, նախքան հայտը կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ **հրավերի բովանդակությանը չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման:**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«ԶԻՆԱՊԱՀԻ «Զոհված զինծառայողների ճանաչման և հարգանքի տուրքի մատուցման» նախագծի **շրջանակներում ծառայությունների մատուցման պայմանագրի կնքում**»

1. Գնման առարկայի բնութագիրը
2. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները և դրանց գնահատման չափորոշիչները
3. Հրավերում և հայտերում փոփոխություն կատարելու կարգը
4. Հայտը ներկայացնելու կարգը, հայտը և կից փաստաթղթերի ցանկը
5. Հայտերի բացումը, գնահատումը և արդյունքների ամփոփումը
6. Պայմանագրի կնքումը
7. Մրցույթը չկայացած հայտարարելը

Սույն հրավերը նպատակ ունի ԶԻՆԱՊԱՀԻ (այսուհետ նաև՝ «Պատվիրատու») կողմից հայտարարված բաց մրցույթին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետ նաև՝ «Մասնակից») տեղեկացնել ընթացակարգի պայմանների գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, ընտրված մասնակցին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակել ընթացակարգի հայտը պատրաստելիս: Հայտերը կարող են ներկայացնել ՀՀ-ում գրանցված

կազմակերպությունները: Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատավարական իրավունքի նորմերի ներքո:

Մրցութային հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ info@zinapah.am:

ՄԱՍ 1
1. ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գնման առարկա է հանդիսանում **ԶԻՆԱՊԱՀԻ «Զոհված զինծառայողների ճանաչման և հարգանքի տուրքի մատուցման» նախագիծը՝** համաձայն սույն կետով նկարագրված տեխնիկական նկարագրի:

ԶԻՆԱՊԱՀԻ «Զոհված զինծառայողների ճանաչման և հարգանքի տուրքի մատուցման» նախագիծ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԶԻՆԱՊԱՀԻ մասին

ԶԻՆԱՊԱՀ Զինծառայողների ապահովագրության ազգային հիմնադրամը ստեղծվել է 2017թ. հայրենիքի սահմանները պաշտպանելիս զոհված կամ անհայտ բացակայող ճանաչված զինծառայողների ընտանիքներին, 1-ին և 2-րդ խմբի զինհաշմանդամություն ձեռք բերած զինծառայողներին կայուն ֆինանսական հատուցումներ տրամադրելու նպատակով՝ հանուն ապագա սերունդների խաղաղության ու անվտանգության: ԶԻՆԱՊԱՀԸ ապաքաղաքական կառույց է և գործում է համաձայն ՀՀ օրենքի:

ԶԻՆԱՊԱՀԸ եզակի հիմնադրամ է տարածաշրջանում, որի շրջանակներում Հայաստանի յուրաքանչյուր աշխատող քաղաքացի պարտադիր վճար է կատարում իր աշխատավարձից: Հիմնադրամը համահայկական նախաձեռնություն է, որի նպատակն է ապահովել կյանքը և առողջությունը հանուն Հայաստանի անվտանգության զոհաբերած զինվորների և նրանց ընտանիքների բարեկեցությունը:

ԶԻՆԱՊԱՀԻ միջոցները գոյանում են՝

- Հայաստանի հարկատուների կողմից վճարվող պարտադիր վճարներից (1,500-15,000 ՀՀ դրամ՝ կախված ամսական եկամուտից)
- Նվիրաբերություններից, որոնք ստացվում են ողջ աշխարհից

- **ՋԻՆԱՊԱՀԻ** ակտիվների կառավարումից:

2024թ. դրությամբ ՋԻՆԱՊԱՀՆ աջակցում է 5,274 զինծառայողների և նրանց ընտանիքների՝ շուրջ 12,500 հայրենակիցներ, ում տրամադրվել է միանվագ 5 և 10 մլն. ՀՀ դրամ, այնուհետև ամսական 100,000 – 300,000 ՀՀ դրամ՝ ըստ սպայական կոչման, նրանց կայուն ֆինանսական բարօրությունը 20 տարի շարունակ՝ ըստ իրավասության ապահովելու նպատակով, իսկ միջոցների հասանելիության դեպքում հնարավոր է հատուցումների ժամկետի երկարաձգում: 2017թ.-ից ի վեր ՋԻՆԱՊԱՀԸ տրամադրել է ավելի քան 89 մլրդ. ՀՀ դրամի հատուցում:

ՋԻՆԱՊԱՀԻ Հոգաբարձուների խորհուրդը և գործադիր թիմը շարունակում են ջանքեր ներդնել զարգացնելու հիմնադրամը և դարձնելու այն մի ինստիտուցիոնալ կառույց՝ **արժանի մեր զինծառայողների նվիրվածությանն ու զոհաբերությանը:**

ՋԻՆԱՊԱՀԻ առաքելությունն է համախմբել ազգին՝ կանգնելու զինծառայողների և նրանց ընտանիքների կողքին, ապահովելու նրանց ֆինանսական կայունությունը և արժանապատիվ կյանքը՝ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ, ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ մեր հանձնառությամբ:

Այսպիսով, **ՋԻՆԱՊԱՀԸ** ազգային համախմբման եզակի հարթակ է, որը հասարակության մեջ սերմանելու է ամուր արժեքներ, համոզմունքներ և վերաբերմունք... հանուն գնահատանքի, աջակցության և հարգանքի...

Այսօր մեր պարտքն է կանգնել զոհված, հաշմանդամ դարձած և անհայտ բացակայող մեր զինվորների և նրանց ընտանիքների կողքին...

ՆԱԽԱԳԾԻ ՆՊԱՏԱԿ

Ի նշան հարգանքի, գնահատանքի և ազգովի մեր երախտագիտության ՋԻՆԱՊԱՀԻ զոհված զինծառայողների, ովքեր իրենց ամենաթանկը՝ կյանքը, զոհաբերեցին մեր հայրենիքի համար, ՋԻՆԱՊԱՀԸ, համագործակցելով ՀՀ Պաշտպանության նախարարության հետ, նախաձեռնել է **ՋԻՆԱՊԱՀԻ զոհված զինծառայողների ճանաչման և հարգանքի տուրքի մատուցման նախագիծ, որը ենթադրում է շուրջ 4,300 զոհերի անվանական հրապարակում ՋԻՆԱՊԱՀԻ կայքում, ինչպես նաև հուշամատյանի ձևավորում գրքային ձևաչափով և հրատարակում:**

Հաշվի առնելով նախագծի ծավալը՝ ՋԻՆԱՊԱՀԻ զոհերի ճանաչման և հարգանքի տուրքի մատուցման այս նախագիծը սույն մրցույթի նպատակով ներկայացվում է 3

լոտերով: Ընդ որում՝ մասնակիցը կարող է դիմել բոլոր 3 լոտերին կամ դիմել 3 լոտերից յուրաքանչյուրին առանձին մեկ հայտով:

Այս նախագծի շրջանակներում ՋԻՆԱՊԱՀԸ ընտրված ընկերությանը կամ ընկերություններին կտրամադրի զոհված զինծառայողների ցանկը անձնական տվյալների գաղտնիության պահպանմանն ուղղված պայմանագրի ստորագրումից հետո:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՐՋԱՆԱԿԸ

Այս առաջադրանքի շրջանակներում ակնկալվում է իրականացնել աշխատանքներ 3 լոտերով՝

Լոտ 1՝

- **ՋԻՆԱՊԱՀԻ զոհված զինծառայողների թվային լուսանկարների հավաքագրում, մշակում և հրապարակում ՋԻՆԱՊԱՀԻ կայքում:**

Լոտ 2՝

- **ՋԻՆԱՊԱՀԻ զոհված զինծառայողների համառոտ ինքնակենսագրականի պատրաստում հայերեն լեզվով՝ համաձայն նախապես մշակված ձևաչափի և հրապարակում ՋԻՆԱՊԱՀԻ կայքում:**

Լոտ 3 ՝

- **Հուշամատյանի ձևավորում գրքային ձևաչափով՝ լուսանկարի և համառոտ ինքնակենսագրականի համադրությամբ: Հուշամատյանի տպագրություն 500 և 1000 օրինակից:**

ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- Ավելի քան 4,300 զոհված զինծառայողների մշակված թվային լուսանկարներ: Լուսանկարների հրապարակում կայքում:
- Ավելի քան 4,300 զոհված զինծառայողների համառոտ ինքնակենսագրականներ հայերեն լեզվով: Ինքնակենսագրականների հրապարակում կայքում:
- Էլեկտրոնային հուշամատյան՝ գրքի ձևաչափով:
- Էլեկտրոնային հուշամատյանի գունավոր տպագրության գնառաջարկ 500 և 1,000 օրինակների համար: Տպագրության տեխնիկական նկարագիրը՝

    - ներքին էջեր՝ 150 գրամ, կավճապատ
    - կոշտ կազմ
    - 180 թերթ, յուրաքանչյուր էջի վրա՝ 12 լուսանկար
    - թղթի չափ՝ 24x33, 4+4 գունավոր տպագրություն

- Գնառաջարկ **Նախագծի նպատակ և նկարագիր** բաժնում շարադրված բոլոր 3 լոտերի համար՝ ըստ սույն փաստաթղթին կից բյուջեի ֆայլի: Ընդ որում՝ լոտերից յուրաքանչյուրը կարող է իրագործվել առանձին և պայմանավորված չլինել մեկ այլ լոտով:

Բոլոր վերջնարդյունքները պետք է փոխանցվեն ԶԻՆԱՊԱՀԻՆ բարձր որակով և թվային կրիչի միջոցով: Զինծառայողների տվյալները պետք է փոխանցվեն ԶԻՆԱՊԱՀԻՆ համակարգված եղանակով:

ԶԻՆԱՊԱՀԻ կայքում զոհերի հրապարակման օրինակելի ձևաչափ՝

- Green Beret Memorial Wall - Green Beret Foundation

Աղբյուրներ, որտեղ կան 44-օրյայի զոհերի լուսանկարներ և պատմություններ՝

- https://imheros.am/hero
- Եռաբլուրի թվային հուշատախտակ
- Տավուշի թեմ
- 44ի տղերքը՝ հրատարակված Դավիթ Թորոսյանի կողմից
- Երկիր Մեդիա, 5-րդ ալիք, Հանրային Հեռուստաընկերություն և այլ հեռուստաալիքներ

ՄԱՍ 2
2. ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

2.1. Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ.

1) դատական կարգով ճանաչվել են սնանկ

2) Հիմնադրամի կողմից չի կարող ձեռքբերում իրականացվել Հիմնադրամի աշխատանքներում ներգրավված անձանց հետ փոխկապակցված անձանցից:
Սույն կետի իմաստով՝

1. ֆիզիկական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք միևնույն ընտանիքի անդամ են կամ վարում են ընդհանուր տնտեսություն, կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն, կամ գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից,
2. ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝
   - տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տասը տոկոսից ավելին տնօրինող մասնակից,
   - Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ,
   - տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ,
   - իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ էական ազդեցություն ունի:

3) ֆիզիկական անձի կարգավիճակ չունեցող մասնակիցները համարվում են փոխկապակցված, եթե

ա. տվյալ անձը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի, այսուհետ՝ բաժնետոմս) տասը և ավելի տոկոսին, կամ իր մասնակցության ուժով կամ տվյալ անձանց միջև կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշել մյուսի որոշումները,

բ. նրանցից մեկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տասը տոկոսից ավելին տիրապետող կամ օրենքով չարգելված այլ ձևով նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող մասնակիցը (բաժնետերը) և (կամ) մասնակիցները (բաժնետերերը) կամ նրանց ընտանիքի անդամները (եթե մասնակիցը ֆիզիկական անձ իրավունք ունեն ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետել (այդ թվում՝ առուվաճառքի, հավատարմագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրերի, հանձնարարականի կամ այլ գործարքների հիման վրա) մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին կամ ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով վերջինիս որոշումները կանխորոշելու հնարավորություն,

գ. նրանցից մեկի որևէ կառավարման մարմնի կամ նման պարտականություններ կատարող այլ անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներից որևէ մեկը միաժամանակ հանդիսանում է մյուս անձի որևէ կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ,

դ. նրանք գործել կամ գործում են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից:

ե. Սույն կետի իմաստով ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, քրոջ կամ եղբոր ամուսինն ու երեխաները:

2.2. Մրցույթի մասնակիցը պետք է ներկայացնի բավարար ապացույցներ, որ ունի համապատասխան կարողություններ, տեխնիկական հմտություններ և փորձ ոլորտում.

- ✓ 5 և ավելի տարվա փորձ
- ✓ Անհրաժեշտ որակավորում ունեցող մասնագետների ցանկ
- ✓ Մասնակիցը պետք է վերջին երեք ֆինանսական տարիների ընթացքում ավարտած լինի առնվազն 2 նմանատիպ աշխատանք/նախագիծ:
- ✓ Առաջադրանքը պետք է մշակվի և հանձնվի ամենասեղմ ժամկետներում

2.3. Սույն ընթացակարգին մասնակցող ընկերությունների գնահատման չափորոշիչներն են.

- ✓ Գին՝ 30%
- ✓ Կազմակերպության և մասնագետների փորձ՝ 20%
- ✓ Նմանատիպ ծրագրերի փորձառություն, պորտֆոլիո՝ 20%
- ✓ Հաճախորդների բազա և կարծիքներ/արձագանքներ՝ 15%
- ✓ Ժամկետներ՝ 15%

ՄԱՍ 3
3. ՀՐԱՎԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՅՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1. Հրավերում փոփոխությունները կարող են կատարվել մինչև հայտերի բացման օրը: Հայտերում փոփոխություններ կատարելու դեպքում մասնակիցներն իրավունք ունեն սույն կանոնակարգով սահմանված կարգով հայտերում կատարել լրացուցիչ փոփոխություններ: ԶԻՆԱՊԱՀԻ հրավերում փոփոխության կատարման դեպքում չի կրում փոփոխության արդյունքում մասնակիցների կրած իրական վնասների ռիսկը:
3.2. Մասնակիցները մինչև հայտերը ներկայացնելու վերջնաժամկետի ավարտը կարող են փոխել կամ հետ վերցնել հայտերը: Մրցույթի հայտի փոփոխումը կատարվում է սույն կանոնակարգով սահմանված մրցույթի հայտ ներկայացնելու համար նախատեսված կարգով: Մասնակիցները նույն կարգով կարող են հետ վերցնել մրցույթի հայտերը՝ մասնավորապես հրավերի 4.2-րդ կետում նշված հասցեին ներկայացնելով դիմում մրցութային հայտը հետ վերցնելու կամ փոփոխելու վերաբերյալ:

ՄԱՍ 4
4. ՀԱՅՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

4.1. Մրցութային հայտերը մասնակիցները Հիմնադրամ են ներկայացնում՝
- ✓ փաստաթղթային եղանակով և/կամ
- ✓ էլեկտրոնային կրիչի միջոցով:

4.2. Մրցութային հայտերը և սույն հրավերով սահմանված փաստաթղթերը ներկայացվում են ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1, սենյակ 317 հասցեում գտնվող ԶԻՆԱՊԱՀԻ գրասենյակ՝ առձեռն կամ փոստային ծառայության միջոցով:

4.2.1. Փաստաթղթային եղանակով մրցույթի հայտը ներկայացնելու դեպքում մասնակիցը հայտը ներկայացնում է սոսնձված, կնքված և ստորագրված ծրարով, որում ներառվում են բաց մրցույթի մասին հրավերով սահմանված բոլոր փաստաթղթերի բնօրինակները և պատճենները: Սույն կետով սահմանված փակ ծրարը արտաքինից պետք է պարունակի տեղեկատվություն մասնակցի էլեկտրոնային ծանուցման հասցեի վերաբերյալ:

4.2.2. Էլեկտրոնային կրիչով մրցույթի հայտը ներկայացնելու դեպքում, մասնակիցը Էլեկտրոնային կրիչը, որում ներառվում են հրավերով սահմանված բոլոր փաստաթղթերը, ներկայացնում է սոսնձված, կնքված և ստորագրված ծրարով: Սույն կետով սահմանված փակ ծրարը պետք է արտաքինից պարունակի տեղեկատվություն մասնակցի էլեկտրոնային ծանուցման հասցեի վերաբերյալ:

4.3. Հրավերով սահմանվում են այն փաստաթղթերը, որոնց բնօրինակը պետք է ներկայացվի հայտով: Բնօրինակի ներկայացման վերաբերյալ նշում չպարունակելու պարագայում, ներկայացվում են սահմանված փաստաթղթերի պատճենները:

4.4.Մասնակիցը չի կարող նույն մրցույթի շրջանակներում ներկայացնել մեկից ավելի մրցութային հայտ: Նույն մրցույթի շրջանակներում Մասնակցի կողմից ներկայացված բոլոր հայտերը հանդիսանում են անվավեր և չեն դիտարկվում ՁԻՆԱՊԱՀԻ կողմից, բացառությամբ սկզբնական հայտում սույն Կարգով սահմանված եղանակով փոփոխություններ կատարելու նպատակով ներկայացված փաստաթղթերը:

4.5. Հայտը և կից փաստաթղթերը՝

Հավելված 1
Հայտի օրինակելի ձև

Պահանջվող տեղեկատվություն	***Մանրամասներ***
Մասնակից կազմակերպության անվանումը	
Պետական գրանցման համարը	
Գործունեության հասցեն	
Բջջային հեռախոսահամարը	
ՀՎՀՀ	
Հայտը լրացնող անձի անուն ազգանունը	
Հայտը լրացնող անձի անձնագրի կամ նույնականացման քարտի տվյալները	
Հայտը լրացնող անձի պաշտոնը մասնակից կազմակերպությունում	
Հայտի լրացման ամսաթիվը	
Հայտը լրացնող անձի ստորագրությունը	
Ծառայության համար առաջարկվող ընդհանուր գինը (ՀՀ դրամով)՝ ներառյալ հարկերը և գումարը յուրաքանչյուր 3 լոտի համար առանձին	
Կազմակերպության և մասնագետների փորձը	
Նմանատիպ ծրագրերի փորձառությունը, պորտֆոլիոն	
Հաճախորդների բազան և կարծիքներ/արձագանքները	

Աշխատանքի ակնկալվող ժամանակը՝ ըստ լոտերի	

4.6. Հայտին կից ներկայացվող փաստաթղթերն են՝
Հրավերի 2-րդ մասի 2.2 կետում ներառված.

- ✓ Անհրաժեշտ որակավորում ունեցող մասնագետների ցանկը և վերջիններիս հակիրճ ինքնակենսագրությունները:
- ✓ Վերջին երեք ֆինանսական տարիների ընթացքում ավարտած առնվազն 2 նմանատիպ աշխատանքի/նախագծի նկարագրություն/հղումներ:
- ✓ Բյուջե և ժամանակացույց՝ ըստ օրինակելի ձևի՝ հավելված 1-ում:

ՄԱՍ 5
5. ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ, ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

5.1. Մրցույթային հայտերը ներկայացնելու վերջնաժամկետն է **2024թ. ապրիլի 1-ը՝ ժամը 16:00:** Մրցույթի հայտերի բացման համար սահմանված օրը և ժամին՝ **2024թ. ապրիլի 2-ին՝ ժամը 17:00-ին**, Վ. Սարգսյան 26/1, սենյակ 317 հասցեում ՀԻՆԱՊԱՀԻ ադմինիստրատիվ օգնականը Հանձնաժողովի անդամների ներկայությամբ կբացի ներկայացված հայտերը և կկազմի դրանց վերաբերյալ ամփոփ տեղեկանք:

5.2. Հայտերով ներկայացված առաջարկները 5.1 կետով սահմանված տեղեկանքի հիման վրա քննարկվում և ամփոփվում են Հանձնաժողովի հայտերի քննարկման և ամփոփման նիստում՝ **2024թ. ապրիլի 4-ին՝ ժամը 16:00-ին:**

5.3.Մրցութային հանձնաժողովը քննարկման և ամփոփման նիստի ավարտից հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում կկազմի մրցույթի արդյունքների մասին արձանագրություն, որտեղ նշված կլինի հետևյալը՝

- ✓ մրցութային հայտերի բացման, ամփոփման վայրը, ամսաթիվը և ժամը, ինչպես նաև մրցութային հանձնաժողովի անդամների, նիստին մասնակցող հրավիրված մասնագետների անունները, ազգանունները և պաշտոնները,
- ✓ մրցույթի հայտերի վերաբերյալ տեղեկությունները,
- ✓ մրցույթում հաղթողի (հաղթողների) անունը/անվանումը, ըստ այն չափորոշիչների, որոնց հիման վրա մրցույթի մասնակիցներից մեկը հաղթող է ճանաչվել,
- ✓ այլ անհրաժեշտ տեղեկություններ:

5.4.Մրցույթի արդյունքներն ամփոփելուց հետո մրցույթում հաղթող է ճանաչվում առավել բարձր գնահատական ստացած առաջարկը: Առաջարկը գնահատելիս առաջարկվող գնից բացի հաշվի են առնվելու նաև Հանձնաժողովի կողմից սահմանված այլ չափորոշիչներ:

ՄԱՍ 6
6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

6.1.Մրցույթում հաղթող ճանաչված մասնակից(ներ)ի հետ մրցույթի ամփոփումից հետո 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում կնքվում է ծառայությունների մատուցման պայմանագիր:

6.2. Մրցույթում հաղթող ճանաչված մասնակից(ներ)ի հետ 6.1 կետում սահմանված ժամկետում պայմանագիր չկնքելու դեպքում ԶԻՆԱՊԱՀԸ գնման պայմանագրի առաջարկ է ներկայացնում մրցույթում երկրորդ, իսկ վերջինիս կողմից առաջարկը չընդունվելու դեպքում՝ երրորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

ՄԱՍ 7
7. ՄՐՑՈՒՅԹԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

7.1. Մրցույթը համարվում է չկայացած, եթե՝

1. մրցույթին չի ներկայացվել ոչ մի հայտ,
2. ներկայացված հայտ(եր)ը կամ դրա(նց) որևէ մաս չի համապատասխանում սույն հայտարարության պահանջներին,
3. Մրցութային հանձնաժողովի կողմից չի որոշվել մրցույթի հաղթող(ներ)ը,
4. մրցույթի հաղթողը հրաժարվել է՝
   - ✓ մրցույթի մասնակցությունից,
   - ✓ պայմանագրի կնքումից,
   - ✓ մրցույթով սահմանված ծառայությունը մատուցելուց, և

   Մրցութային հանձնաժողովը վերոնշյալ 4-րդ կետով նախատեսված դեպքերից որևէ մեկի ի հայտ գալուց հետո սույն Կանոնակարգի 6.2 կետով նախատեսված կարգով նոր հաղթող չի հայտարարել:
5. Չեն պահպանվել սույն հայտարարությամբ սահմանված այլ պահանջներ:

Հավելված
Բյուջեի և ժամանակացույցի օրինակելի ձև

ԲՅՈՒՋԵԻ օրինակ
Զոհված զինծառայողների ճանաչման և հարգանքի տուրքի մատուցման նախագիծ

Լոտ 1 - Զոհված զինծառայողների թվային լուսանկարների հավաքագրում, մշակում և հրապարակում ՀԻՆԱՊԱՀԻ կայքում

	Բյուջեի հոդված	Միավոր	Գին	Ընդ.
			ՀՀ դրամ	ՀՀ դրամ
1	Լուսանկարների հավաքագրում	4,300	0	0
2	Լուսանկարների մշակում	4,300	0	0
3	Լուսանկարների տեղադրում կայքում	4,300	0	0
4	Այլ	4,300	0	0
5	Այլ	4,300	0	0
	Ընդամենը			-

Լոտ 2 - Զոհված զինծառայողների համառոտ ինքնակենսագրականի պատրաստում հայերեն լեզվով՝ համաձայն նախապես մշակված ձևաչափի և հրապարակում ՀԻՆԱՊԱՀԻ կայքում

	Բյուջեի Հոդված	Միավոր	Գին	Ընդ.
			ՀՀ դրամ	ՀՀ դրամ
1	Ինքնակենսագրականի հավաքագրում և խմբագրում	4,300	0	0
2	Այլ	4,300	0	0
3	Այլ	4,300	0	0
	Ընդամենը			-

Լոտ 3 - Հուշամատյանի ձևավորում գրքային ձևաչափով՝ լուսանկարի և համառոտ ինքնակենսագրականի համադրությամբ: Հուշամատյանի տպագրություն 200, 500 և 1000 օրինակից:

	Բյուջեի Հոդված	Միավոր	Գին	Ընդ.
			ՀՀ դրամ	ՀՀ դրամ
1	Լուսանկարների մշակում, տեղադրում և ձևավորում	4,300	0	0
2	Տպագրություն*	500	0	0
3	Տպագրություն*	1,000	0	0
	Ընդամենը /ձևավորում և տպագրություն՝ 500 հատ/			**0**
	Ընդամենը /ձևավորում և տպագրություն՝ 1,000 հատ/			**0**

* ներքին էջեր՝ 150 գրամ, կավճապատ
* կոշտ կազմ
180 թերթ, յուրաքանչյուր էջի վրա՝ 12 լուսանկար
Թղթի չափ՝ 24x33, 4+4 գունավոր տպագրություն

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ օրինակ

Զոհված զինծառայողների ճանաչման և հարգանքի տուրքի մատուցման նախագիծ

Լոտ 1 - Զոհված զինծառայողների թվային լուսանկարների հավաքագրում, մշակում և հրապարակում ԶԻՆԱՊԱՀԻ կայքում

		Վերջնաժամկետ	
		մեկնարկ	ավարտ
1	Լուսանկարների հավաքագրում		
2	Լուսանկարների մշակում		
3	Լուսանկարների տեղադրում կայքում		

Լոտ 2 - Զոհված զինծառայողների համառոտ ինքնակենսագրականի պատրաստում հայերեն լեզվով՝

		Վերջնաժամկետ	
		մեկնարկ	ավարտ
1	Ինքնակենսագրականի հավաքագրում և խմբագրում		

Լոտ 3 - Հուշամատյանի ձևավորում գրքային ձևաչափով՝ լուսանկարի և համառոտ ինքնակենսագրականի համադրությամբ:

		Վերջնաժամկետ	
		մեկնարկ	ավարտ
1	Լուսանկարների մշակում, տեղադրում և ձևավորում		
2	Տպագրություն		